

Թէւ վարի խորհրդածութիւնները 12 տարուայ տարիք ունին, սակայն այսօր անոնք չեն կորսնցուցած իրենց թարմութիւնը: Շահեկանութեան համար զայն կը յանձնենք ընթերցողներուն:

Ներկայացուող գրութիւնը առնուած է 2001-ին մինչեւ իր անժամանակ շիջումը, կը վարէր Հայաստանի Գրողներու Միութեան Նախագահի պաշտօնը:

Ներկայացուող գրութիւնը առնուած է 2013-ին հրատարակուած «Ժամանակ եւ Ոգի» հատորէն, Անթիլիաս:

Լեւոն Անանեան

Թերեւս աւելորդ է նշել, թէ ինչպէս է հազարամեակների ընթացքում մեր մայրենին կիսել իր ժողովրդի պատմական ճակատագիրը, նրա հետ դժուար ժամանակ անցնելով՝ խտացած-քիւրեղացած հասել մեր օրերը՝ մշտապէս մնալով հայոց ինքնութեան հիմքն ու հայելին:

Անկախութեան տասնամեակի նուաճումներից մէկը հայոց լեզուի պետական կարգավիճակն է՝ վաւերագրուած-ամրագրուած Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեամբ և լեզուի մասին ՀՀ օրէնքով:

Ազգային և պետական լեզուի այս բարձրագոյն չափանիշների պահպանման մտահոգութեամբ են թելադրուած հասարակական թէժ քննարկումները՝ կապուած լեզուի ուսուցման հրատապ հիմնախնդիրների, ինչպէս նաեւ մեր լեզուաքաղաքականութեան ոլորտում կատարուող վտանգաւոր տեղաշարժերի հետ: Մանաւանդ որ այս մտահոգութիւնը նոր դարասկզբի աննախադէպ անցումների ու աշխարհաքաղաքական փոփոխութիւնների մէջ միայն մերը չէ և յատկապէս թելադրուած չէ փոքր ազգի ինքնապահպանման բնագոյով:

Թերթէք ռուսական մասնուրը և կը համոզուէք, թէ ինչ ուժգնութեամբ է ռուս մտաւորականութիւնը զգօնութեան թմբուկներ խփում Ռուսաստանի բազմազգ Դաշնութեան տարածքում, թում է, թէ անխոցելի ռուսերէնի հնարաւոր հոգեվարքի երկիւղով՝ յայտարարելով, թէ իր երկրում պետական լեզուն պէտք է լինի մէկն ու միակը: Եւ եթէ բազմամիլիոնանոց Ռուսաստանն է տագնապած,

ԼԵՉՈՒԻ ԿՈՐՈՒՍՏԸ ԱԶԳԻ ԿՈՐՈՒՍ Է

որ ռուսաց լեզուն բառացիօրէն յայտնուել է միջազգային նորօրեայ խաչակիրների ծրագրուած արշափ կրնկի տակ, առաւել եւս մենք, փոքրաթիւ լինելով, չպէտք է պարտադրաբար կամ կամովին, դրսի թելադրանքով կամ տարափոխիկ ստրկահաճութեամբ ոտնակոյի տանք մեր մայրենին: 21-րդ դարում հեծանի չես յայտնագործի՝ պարզապէս պիտի փոխառել ու վերահաստատել ռուսների լեզուաքաղաքականութիւնը. մեզանում եւս հայերէնը պետական լեզուն է՝ մէկն ու միակը:

Գաղտնիք չէ թէ անցեալ դարավերջին (և այսօր էլ), ինչ ծանր փորձութեան ենթարկեցին մեր կրթական համակարգը այսպէս կոչուած բարենորոգիչները, վարեցին ու ցանցեցին մեր աւանդական մանկավարժութեան խորթ, օտարամուտ հունտեր, և թէ ինչ աւերներ գործեցին յատկապէս լեզուաքաղաքականութեան մէջ, որքի գլխին վարսափրութիւն սովորելով: Տուեալ դէպքում որքը մեր ոսկեղնիկ հայերէնն էր և բազմադարեայ գրականութիւնը: Եւ մենք անխուսափելի նահանջ արձանագրեցինք:

Բարեբախտաբար դպրոցն իր բնոյթով պահպանողական կառոյց է, և թերեւս նրա ուժը հիշք պահպանողականութեան մէջ է, որ մերժում է ամէն կարգի անխոհ ու անհեռանկար միջամտութիւն:

Իրենց մասնագիտական անաչառ գնահատականն են սպասում այն նորարարութիւններն ու «գիտափորձերը», որոնք ներդրում են լեզուի բնագաւառում. անշուշտ, որեւէ գիտութիւն տեղապտոյտը չի կարող յաղթահարել առանց առաջընթացի փորձերի, որոնք անպայման պէտք է նպատակ ունենան մայրենի լեզուի ուսուցման մեթոդների կատարելագործումն ու հարստացումը: Եւ ոչ թէ անպայման բազմալեզու կրթական հայեցակարգի հաստատման գնով վաւերացնենք որեւէ օտար լեզուի գերադասութիւնը հայերէնի նկատմամբ: Ոչ որ չի տառապում գաւառական կարճատեսութեամբ և չի նսեմացնում յատկապէս անգլերէնի ու ռուսերէնի առանձնայատուկ դերն ու տեղը մեր իրականութեան մէջ, սակայն ուսումնական գիտափորձերը պիտի ընթանան բացառապէս մասնագէտների հսկողութեամբ:

Եւ, վերջապէս մեր յստակ ու անզիջում վերաբերմունքը պէտք է արտայայտենք լեզուական խաթարումների դէմ, մասնաւորապէս Ազգային Ժողովում, որի բարձր ամբիոնից հայերէնը ամէն

Աստծոյ օր նահատակում ու վերայառնում է, և որը անխոնջ յամառութեամբ մեզ է հրամցնում զանազան ու զարմանազան օրինագծեր: Այդ օրինագծերի բուն նպատակը աւելի քան թափանցիկ է և ապագային...

Այսօր բոլորս, թէ՛ պետութիւնը, որ հայոց լեզուի պահպանութեան և զարգացման երաշխաւորն է, թէ՛ ուսուցիչը, որ հայերէնը անմեռ է պահում հայ աշակերտի հոգում, թէ՛ գիտնականը, որ կոչուած է ոչ թէ քննդելու, այլ ամրապնդելու մեր լեզուագիտութիւնը, և թէ՛ քաղաքական գործիչը՝ անգամ իր նախընտրական խաղերում, պէտք է առաջնորդուենք մի անբեկանելի ճշմարտութեամբ՝ լեզուի կորուստը ազգի կորուստ է: □
(Ընդգծումը մերն է-Խմբ.):



ԻՆՉ ԸՍԱԾ ԵՆ ՄԵԾԵՐԸ ՆԱՅՈՅ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ

❁ Յունարէնը մեղմ է, հռոմէական լեզուն՝ հզօր, հոներէնը՝ ահաբեկող, ասորերէնը աղերսական, պարսկերէնը՝ պերճ, ալաներէնը՝ գեղեցկագարդ, ...հնդկերէնը ճշուողական, հայերէնը՝ քաղցր, որ միաժամանակ կրնայ միւս բոլոր լեզուներու յատկութիւնները ամփոփել իւր մէջ: (Եղիշէ)

❁ Տասը լեզու տրովեցէք, բայց ձեր լեզուն ամէնէն բարձր պահեցէք: (Խաչատուր Աբովեան)

❁ Լեզուն ազգին հոգին է. կենդանի է այն ազգը, կենսունակ է առաջինը, ուրեմն կենսունակ է երկրորդը: (Վահան Տէրեան)

❁ Նայ լեզուն տունն է հայուն, աշխարհի չորս ծագերուն: (Մուշեղ Իշխան)

❁ Մայրենի լեզուն թանկագին գանձ մըն է՝ դարաւոր սերունդներու աշխատանքով գոյացած և մեզի աւանդուած, և պէտք չէ մոռնալ, թէ երբեք իրաւունք չունինք անփոյթ և անխնամ ըլլալու, ծռելու և աղճատելու գայն: (Լեւոն Շանթ)

❁ Մեր հայերէնը մեզի աւանդուած ժառանգութիւններէն ամէնէն շքեղն է: Ամէնէն իրականը մեր գեղեցիկ, հարուստ և մեծավայելուչ լեզուն է: Նրայրքով և խանդավառութեամբ, ես վստահ եմ որ կը պաշտպանենք գայն: (Զապէլ Եսայեան)

Նաաքեց՝ Յովսէփ Նալպանտեան